



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 4 ՓԵՏՐՈՒՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՅՈՐ (38-42)

ՏԷՐԸ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՆԷ ՅՈՐԻՆ

Այն ապեն Տերը փոթորիկին մէջէն պարասխան փալով Յորին ըսաւ.
Ո՛վ է աքիկա, որ անիմաստ խօսքերով Խորհուրդը կը նսեմացնէ:
Հիմա կտրիճի պէս մէջքդ պնդէ՛. քեզի հարցնեմ եւ քու գիպցածդ ինձի իմացուր:
Ո՛ր էիր դուն՝ երբ ես երկրին հիմերը կը դնէի.
Եթէ գիպես՝ ըսէ՛ ո՛վ դրաւ անոր չափերը, կամ թէ անոր վրայ լարը ո՛վ քաշեց:
Անոր հիմերը ինչի՞ վրայ հաստատուած են, կամ անոր անկիւնին քարը ո՛վ դրաւ,
երբ առաւօտեան աստղերը մէկտեղ փառաբանութիւն կ'ընէին,
ու երբ Աստուծոյ բոլոր որդիները ցնծութեամբ կ'աղաղակէին:
Նաեւ ծովը՝ որովայնէն յարձակելով ելած ժամանակը՝ ո՛վ գոցեց զանիկա դռներով,
երբ ամպը անոր հանդերձ դրի ու մէզը՝ խանձարուր եւ անոր վրայ իմ հրամաններս
հաստատելով՝ անոր փականք ու դռներ դրի ու ըսի անոր.
«մինչեւ հոս եկուր ու անդին մի՛ անցնիր եւ քու ալիքներուդ
հպարտութիւնը հոս թող դադրի»:
Կեանքիդ մէջ երբեք առաւօտեան հրաման ըրի՛ր,
Արշալոյսին իր ծագելու փեղը ցուցուցի՛ր:
Ծովուն աղբիւրները մտնէ՛ր ես, ու անդունդին ծածուկ փեղերը պարզե՛ր ես:
Եթէ ամենքը գիպես՝ ըսէ՛:
Այն ապեն Յոր Տիրոջ պարասխան փալով ըսաւ. «Գիպեմ որ ամէն բանի կարող ես,
ու քու դիտարարութիւնդ բնաւ պարապ չ'ելլեր»:
Ո՛վ է անիկա որ փոփոխութեամբ Խորհուրդը կը նսեմացնէ:
Քեզի հարցնեմ ու ինձի տրվեցուր, ես քու մասիդ ականջով լսեր էի,
բայց հիմա աչքս կը փեմնէ քեզ:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՐԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ

ԾՆՆԴՈՑ 1:3-19



Ուրեմն, ջուրի ներկայութիւնը՝ ծնունդի, սկիզբի, եւ Աստուծոյ Հոգիին ներկայութիւնը վերածնունդի խորհրդանիշներն են:

Կարելի է երկու սրեղծագործութիւնները՝ հին ու նոր իրարու համեմատել, կը տեսնենք որ առաջին սրեղծագործութենէն առաջ մարդը չկար եւ Աստուծոյ Հոգին կը շրջի ջուրերու վրայ, ցոյց տալով, որ Աստուած շուրջով կեանք պէտք է պարգեւէ աշխարհին: Իսկ Քրիստոսի մկրտութեան արեւն փակաւին չկայ Աստուծոյ ժողովուրդը: Քրիստոս Ինքն է, որ պէտք է սկիզբ դնէ նոր սրեղծագործութեան եւ Աստուծոյ ժողովուրդին: Տակաւին, ինչպէս Սուրբ Հոգին ջուրերու վրայ կը շրջի, նոյնպէս Յորդանան գետի վրայ աղանակերպ էջքը, որ ցոյց կու տայ նոր սրեղծագործութեան սկիզբը:

«Նորասրեղծեալ Բանն յանէից, իսկզբանէ յերկինս յերկնից, եւ գերկնային գօրս անմարմնոց իմանալեացն գուարթնոց»:

Այս շարականի բացատրութեամբ ցոյց կը տրուի թէ երկնային անմարմին գօրքերը, այսինքն ոգեղէն էակները՝ հրեշտակները, առաջին օրն է որ սրեղծուեցան, որպէս լոյսի որդիները:

Սրեղծագործութեան առաջին օրը Աստուած ըսաւ. «Լոյս թող ըլլայ»: Լոյսը գոյացնելու միջոցը Խօսքն -ԲԱՆ- էր: Ինչ որ նոյնը կը կարդանք Յովհաննո Աւետարանին մէջ «Սկիզբէն էր Բանը»: Այսպիսով առաջին երեք համարներու մէջ կը ներկայացուի *Ս. Երրորդութիւնը*:

Իսկ Խօսքի մասին, կը տեսնենք Աստուծոյ հրահանգը եւ Աստուծոյ սրեղծելու եղանակը, կերպը: Աստուած ջանք չի թափեր արեւստարաբանի մը պէտք սրեղծելու, այլ՝ խօսքով միայն կը կարարէ սրեղծագործութիւնը, ինչպէս Քրիստոս եւս մէկ խօսքով պիտի բժշկէր, հրաշագործէր, ու փակաւին կեանք պիտի տար:

(Ծն 1.6). Աստուած ըսաւ. «Ջուրերուն մէջտեղը հաստատութիւն ըլլայ եւ ջուրերը ջուրերէն գարէ»:

Ամպերը ուրիշ բան չեն եթէ ոչ ջրաշոգի խտրացած զանգուածներ, եւ այս գլուխին մէջ ամպերու մասին խօսք չկայ: Կարելի է հասկնալ թէ վերին ջուրերը ճիշդ այդ ամպերն են. գիտական բացատրութիւն չունէր նախնական մարդը, այլ կը պարկերացնէր թէ վերը ամբարած ջուրն է որ անձրեւի ձեւով վար կ'իջնէ: Վարի ջուրերն են ծովերու, գետերու, լիճերու, ովկիանոսներու ջուրերը:

(Ծն 1.8). Աստուած հաստատութիւնը երկինք կոչեց: Նախապէս, մարդոց համար երկինքը անսահմանելի եւ անհասանելի վայր մը չէր: Անոնց մտայնութիւնը կրնանք հասկնալ Բաբելոնի աշտարակի շինութեան ընթացքէն, երբ կը կարծէին թէ երկինք պիտի հասնէին: Այսպէս երկինքը վստահաբար մեզ շրջապատող օդի տարածութիւնն է մինչեւ հոն ուր այդ օդի տարածութիւնը կ'երկարաձգուի:

Հաստատութիւն արտայայտութեան համար երկու բացատրութիւններ կան. -

ա. Այն ժամանակուան մարդոց բացատրութիւնը կամ պարկերացումը հաւանաբար այն է որ անոնք երկինքը կը պարկերացնէին հաստատութիւն իսկ մը, տարածութիւն մը, կամար մը, որուն վրայ գերեզման էն արեւը, լուսինը, աստղերը:

բ. Աստուածաշունչի հասկացողութեան համաձայն, հաստատութիւնը հոս օդի տարածութեան բաժին մըն է, ճիշդ մթնոլորտը բառին համապատասխանող:

Եւ ահա տրամաբանական ու բնութենական կարգով Աստուած անձեւն ու պարապը կը ձեւաւորէ ու կը լեցնէ:

«Հաւարքով է որ կը հասկնանք փիեզերքին սրեղծումը Աստուծոյ խօսքով, որով տեսանելի այս փիեզերքը ոչինչէն գոյացաւ» (Եբր 11:3):

Եւ Աստուած տեսաւ որ բարի են: Նախ Արարիչը ինք ըլլալով Բարի (Մատթ 19:16-17), իր սրեղծածներն ալ բարի են եւ բարիին պիտի ծառայեն: